Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի նիստում,
արձանագրություն N 7,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

_____ Կ. Լ. Աթոյան

«_____» _____ 2017 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», ՀՊՏՀ կանոնադրությունը:

2. ՀՊՏՀ առկա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

3. Մագիստրատուրայի ընդունելությունը (փաստաթղթերի ընդունում և քննությունների կազմակերպում) իրականացնելու նպատակով ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի նախագահությամբ: Քննությունների անցկացման համար ռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ՝ համապատասխան մագիստրոսական ծրագրերն իրականացնող

ամբիոնների վարիչների և ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների անդամակցությամբ:

4. Առկա մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 2 փուլով.

4.1. Առաջին փուլում պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), այդ թվում՝ պարտադիր զինվորական ժամկետային ծառայությունից տարկետման իրավունքով ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել միայն ՀՊՏՀ առկա բակալավրիատի տվյալ մասնագիտության 2016-2017 ուսումնական տարվա այն շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացել են 86 և ավելի միավոր, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված ուսումնառության բոլոր կիսամյակների արդյունքում կուտակված միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 86: Շրջանավարտները անվճար հիմունքներով առկա մագիստրատուրա կարող են դիմել.

1) «Կառավարում» մասնագիտությունից՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Նախագծերի կառավարում», «Սոցիալական կառավարում», «Հանրային կառավարում» մասնագիտացումներով.
2) «Աշխատանքի տնտեսագիտություն» մասնագիտությունից՝ «Աշխատանքի տնտեսագիտություն», «Աշխատանքի և աշխատավարձի կազմակերպումը ծառայությունների ոլորտում» մասնագիտացումներով.
3) «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությունից»՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն», «Ձեռնարկատիրական գործունեություն», «Միկրոտնտեսագիտական վերլուծություն» մասնագիտացումներով.
4) «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությունից՝ «Արտաքին առևտրային քաղաքականություն», «Միջազգային արժութաֆինանսական հարաբերություններ» մասնագիտացումներով.
5) «Հողագույքային հարաբերություններ» մասնագիտությունից՝ «Հողագույքային հարաբերություններ», «Պետական գույքի կառավարում» մասնագիտացումներով.

6) «Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում» մասնագիտությունից՝ «Մակրոտնտեսական վերլուծություն», «Տնտեսության պետական կարգավորում» մասնագիտացումներով.
7) «Մարքեթինգ» մասնագիտությունից՝ «Մարքեթինգային հետազոտություններ», «Մարքեթինգային հաղորդակցություններ» մասնագիտացումներով.
8) «Ֆինանսներ» մասնագիտությունից՝ «Հանրային ֆինանսներ», «Կորպորատիվ ֆինանսներ», «Հարկային վարչարարություն», «Պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում», «Կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառավարում» մասնագիտացումներով.
9) «Տնտեսագիտական վերլուծություն» մասնագիտությունից՝ «Հաշվապահական հաշվառում», «Աուդիտ» մասնագիտացումներով.
10) «Վիճակագրություն» մասնագիտությունից՝ «Վիճակագրություն», «Տնտեսության վիճակագրական վերլուծություն և կանխատեսում», «Կիրառական վիճակագրություն և մտավոր վերլուծություն» մասնագիտացումներով.
11) «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունից՝ «Կառավարման տեղեկատվական համակարգեր», «Էլեկտրոնային բիզնես» մասնագիտացումներով:

«Տնտեսագիտության տեսություն», «Բնօգտագործման տնտեսագիտություն», «Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ», «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», «Աուդիտ», «Ապահովագրական գործ», «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում», «Բանկային գործունեության կազմակերպում», «Մաքսային վարչարարություն», «Պետական և մունիցիպալ կառավարում», «Հակաճգնաժամային կառավարում», «Զբոսաշրջության կառավարում», «Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն», «Կոմերցիա», «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտություններով և մասնագիտացումներով առկա անվճար մագիստրատուրա ընդունվելու համար կարող են դիմել միայն բակալավրական համանուն մասնագիտության ՀՊՏՀ տվյալ տարվա շրջանավարտները: Ընդունե-

լությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ ըստ դիմորդների ՄՈԳ-երի (հարյուրերրորդականի ճշտությամբ):

Դիմորդների հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

- գերազանցության դիպլոմի առկայությունը.
- ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացած միավորը.
- մասնագիտական և մասնագիտացման առարկաներից ստացած միավորների գումարը:

Պարտադիր զինվորական ժամկետային ծառայությունից տարկետման իրավունքով հատկացված տեղերի շրջանակներում առկա մագիստրատուրա ընդունվում են արական սեռի այն դիմորդները, ովքեր հաղթահարել են տվյալ մասնագիտության անվճար (ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) համակարգի մրցութային շեմը՝ ըստ ՄՈԳ-երի:

4.2. Երկրորդ փուլում առկա մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել ՀՊՏՀ (նաև 4.1. ենթակետի պահանջները չբավարարելու դեպքում) և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ և նախորդ տարիների առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները: Ըստ ՄՈԳ-երի ընդունելության մրցույթին սահմանված տեղերի շրջանակներում մասնակցում են ՀՊՏՀ տվյալ մասնագիտության շրջանավարտները, ինչպես նաև ՀՊՏՀ այլ մասնագիտություններ և այլ բուհեր ավարտած այն դիմորդները, ովքեր հաղթահարել են մասնագիտական շեմային քննությունը: Առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա իրականացվում է մրցույթ ըստ դիմորդների ՄՈԳ-երի: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը:

Բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում առկա անվճար մագիստրատուրա կարող են դիմել ՀՊՏՀ տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորում ունեցող պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված

դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց շեմային քննության, մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ի հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը: Անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները նույն մասնագիտությամբ վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության՝ մրցութային կարգով: Մասնագիտության փոփոխման պարագայում ՀՊՏՀ, այլ բուհերի շրջանավարտների, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և մինչև երեք տարի առաջ զորացրված դիմորդների ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում՝ տվյալ մասնագիտության ընդունելության շեմային քննության արդյունքներով՝ ըստ ՄՈԳ-երի: Առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա իրականացվում է մրցույթ ըստ դիմորդների ՄՈԳ-երի: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձ-նաժողովը:

5. Ըստ մասնագիտությունների և մասնագիտացումների ընդունելության շեմային քննությանը դիմորդը մասնակցում է, եթե ՀՊՏՀ տվյալ մասնագիտության շրջանավարտ չէ: Դիմորդը քննություն է հանձնում իր կողմից հայտագրված մասնագիտության (մասնագիտությունների) և (կամ) մասնագիտացման (մասնագիտացումների) համար հետևյալ առարկաներից.

1) «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Նախագծերի կառավարում», «Սոցիալական կառավարում», «Հանրային կառավարում» մասնագիտացումների համար՝ «Մենեջմենթի հիմունքներ».
2) «Աշխատանքի տնտեսագիտություն» և «Աշխատանքի և աշխատավարձի կազմակերպումը ծառայությունների ոլորտում» մասնագիտացումների համար՝ «Աշխատանքի տնտեսագիտություն».
3) «Ձեռնարկությունների տնտեսագիտություն», «Ձեռնարկատիրական գործունեություն», «Միկրոտնտեսագիտական վերլուծություն»

մասնագիտացումների համար՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում».

4) «Արտաքին առևտրային քաղաքականություն», «Միջազգային արժութաֆինանսական հարաբերություններ» մասնագիտացումների համար՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ».
5) «Հողագույքային հարաբերություններ» մասնագիտացման համար՝ «Հողագույքային հարաբերություններ».
6) «Պետական գույքի կառավարում» մասնագիտացման համար՝ «Պետական գույքի կառավարում».
7) «Մակրոտնտեսական վերլուծություն», «Տնտեսության պետական կարգավորում» մասնագիտացումների համար՝ «Մակրոտնտեսական կարգավորում».
8) «Մարքեթինգային հետազոտություններ» և «Մարքեթինգային հաղորդակցություններ» մասնագիտացումների համար՝ «Մարքեթինգ».
9) «Հանրային ֆինանսներ», «Կորպորատիվ ֆինանսներ», «Հարկային վարչարարություն», «Պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում», «Կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառավարում» մասնագիտացումների համար՝ «Ֆինանսներ».
10) «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության համար՝ «Հաշվապահական հաշվառում».
11) «Աուդիտ» մասնագիտացման համար՝ «Աուդիտ».
12) «Վիճակագրություն», «Տնտեսության վիճակագրական վերլուծություն և կանխատեսում», «Կիրառական վիճակագրություն և մտավոր վերլուծություն» մասնագիտացումների համար՝ «Վիճակագրություն».
13) «Կառավարման տեղեկատվական համակարգեր» և «Էլեկտրոնային բիզնես» մասնագիտացումների համար՝ «Կառավարման տեղեկատվական համակարգեր».
14) «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության համար՝ «Տնտեսագիտության տեսություն».

15) «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտության համար՝ «Բնօգտագործման տնտեսագիտություն».
16) «Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ» մասնագիտության համար՝ «Տնտեսական գործընթացների մոդելավորում».
17) «Ապահովագրական գործ» մասնագիտության համար՝ «Ապահովագրական գործ».
18) «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» մասնագիտացման համար՝ «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում».
19) «Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտացման համար՝ «Բանկային գործ».
20) «Մաքսային վարչարարություն» մասնագիտացման համար՝ «Մաքսային գործ».
21) «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտացման համար՝ «Մենեջմենթի հիմունքներ».
22) «Հակաճգնաժամային կառավարում» մասնագիտացման համար՝ «Հակաճգնաժամային կառավարում».
23) «Զբոսաշրջության կառավարում» մասնագիտացման համար՝ «Զբոսաշրջության մենեջմենթ».
24) «Կրթության կառավարում» մասնագիտացման համար՝ «Կրթության կառավարում».
25) «Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն» մասնագիտացման համար՝ «Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն».
26) «Կոմերցիա» մասնագիտության համար՝ «Կոմերցիա».
27) «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտացման համար՝ «Բիզնեսի տնտեսագիտություն և պլանավորում»:

6. Դիմում-հայտում դիմորդը կարող է հայտագրել առավելագույնը 2 (երկու) մագիստրոսական ծրագիր՝ ըստ նախապատվության: Հայտում նշված առաջին ծրագրի չբացվելու կամ մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին: Ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի

համապատասխանում ՀՊՏՀ գիտական խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 22-ի N 9 նիստով սահմանված պահանջին: Եթե դիմորդը չի ընդունվում իր կողմից հայտագրված մասնագիտություններից (մասնագիտացումներից) որևէ մեկում, ապա ընդունող հանձնաժողովը կարող է նրան առաջարկել որևէ այլ մասնագիտություն, որտեղ առկա են թափուր տեղեր՝ տվյալ մասնագիտության շեմային քննությունը հանձնելու պայմանով:

7. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1) մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է տեղում).
2) բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճենները.
3) անձնագրի բնօրինակը և պատճենը.
4) 2 լուսանկար (3x4 չափսի).
5) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) բնօրինակը և պատճենը:

8. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են՝ 1-ին փուլով՝ հունիսի 2-ից մինչև հունիսի 9-ը ներառյալ, 2-րդ փուլով՝ հունիսի 2-ից մինչև հուլիսի 5-ը ներառյալ՝ ժամը 9:00-17:30: Շեմային քննությունը տեղի կունենա հուլիսի 6-ին, ժամը 10:00-ին: Ընդունելության արդյունքները հրապարակվում են՝ 1-ին փուլով՝ մինչև հունիսի 15-ը, 2-րդ փուլով՝ մինչև հուլիսի 14-ը:

9. Վերջին երեք տարիներին ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված՝ բանակից զորացրված դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում փաստաթղթերն ընդունվում են մինչև տվյալ տարվա օգոստոսի 25-ը ներառյալ:

10. Առկա ուսուցմամբ վճարովի մագիստրատուրա ընդունված դիմորդների վերջնական հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ ուսման վարձը վճարելուց հետո: